ԿՐՕՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔԱՅ

ՀԱՏՈՐ Բ. ՈՒՅԺ-1861 ՏԵՏՐԱԿ ԺԹ.

ԱՂՕԹՔ

ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ

(Նարբէից*):

Ընհատանելի իսկութիւն, անճառ էութիւն, անեղ բնութիւն, աղբիւր անմահութեան, բղխումն ողորմութեան, կեանք և յոյս կենդանութեան, Հիւսա Վրիստոս: Ես քեզ համբառնամ ըզմիտս և զսրտիս խորհուրդս իմ, և խնդրեմ զքոյդ ողորմութիւն ի քէն իմ բազում յանցանացն. փափագիմ խօսիլ ընդ քեզ, և ամօթ երեսաց իմոց խոչընդոտանէ զիս. չանամ աղօթել առ քեզ, և անօրէնութիւնք իմ զարհուրեցուցանեն զիս. փութամ և ճեպիմ գալ ի լոյսդ, և մռայլատուր յանցանաց իմոց խոչընդոտանէ զիս: Օ՜ւ՞ր ապարիջ՝ ուր զիտեմ. զի եթէ յանդգնիմ գալ առ քեզ՝ երկիւղ պաշարէ զանձն իմ, քանզի այրիմ ի հրոյ Աստուածութեանդ. և եթէ ի բաց փախչիմ՝ կորնչիմ: Սակայն լաւ է գալ առ քեզ՝ և ծախիլ, քան թէ հեռանալ՝ և կորնչիլ: Ա՛սան որոյ հաւատացեալիմ անկանիլ առաջի քո և խնդրել ի քէն զքոյդ ողորմութիւն:

* Օրինակ աղօթից գտաւ՝ի կատարած Դատաստանադրոյ Մխիթարայ Գոշի, որ և ունէր զայս ծանօթութիւն. „Արդեաւ այր մի վաճառական՝ի խնդիր երթեալ մի պատուական մարգարտի, և իբրև լինի գտանել զնա՝ուրախ լինի. նոյնպէս ես Մխիթս՝ զաղօթս Նարեկացւոյ, որ մականուն Զապաղարեցի կոչի“: Ծանօթ. Մ. Մ.

Ընդոքակո՛ղ և քաղցր Տէր, անառիս ապա գյանցանս իմ, և լուա ցանբաւ աղա մեղաց իմոց· ապա զգլուխ իմ շտեմարանս ջրոց, և զաչս իմ վտակս արտասուաց, զի լուացիչ զբազմութիւն անթիւ մեղաց իմոց: Ա՛յս ձշմարիտ՝ Արիստաս, լուսաւորեա զիաւարեալ աչս սրտի իմոյ, և տո՛ւր ինձ խնամատութիւն՝ ձանաչել զպատուիրանս քո· ձգեա՛ ի սիրտ իմ զերեսո՛ն քո, և զօրացո՛ զիս ի քեզ: Կործանեաց զիս չարագործ թշնամին, և հեռացոյց յերկիր զկեանո՛ն իմ: տո՛ւր ձեռն, և կանգնեա՛ զիս: Ա՛ռիս էի, նուաստացոյց զիս· փարթամ էի, աղքատացոյց զիս· կարկառեա՛ զձեռն քո, հզո՛ր, և բարձրացո՛ զիս: Օտարացայ ի քէն, Ա՛ստուած· ընդանացո՛ զիս: Ի՛անտարկուն վիրաւորեաց· բժշկեա՛ զիս: Ընկալայ զպատուիրանս քո՝ և ո՛չ պահեցի: Առի զընտրհս քո՝ և թշնամւոյն մատնեցի: Օ՛սրբութիւնս իմ աղտեղացուցի· զկուսութիւնս վատնեցի· զաղբիւր դիտութեանն խափանեցի· զբարի սերմն սխալեցի· զկենաց պտուղդ բարկացուցի· զգանձ հայրենեացն ծախեցի· զքո պատկերս արհամարհեցի· չար գործովքս փարթամացայ: Ի տըղայութեան չվրատեցայ· յերիտասարդութեան զուարճացայ· ի ծերութեան չսգացայ: Ի մեղաց ո՛չ յագեցայ· ի պատուիրանաց ո՛չ պատկառեցայ· ի յորդանըն ո՛չ քաւճնեցայ: Օ՛դատաւորդ տրտմեցուցի· զիմ դատաստանն ծանրացուցի· զերկինքն երկնաւորաքն դառնացուցի· զաշխարհիս սրբութքն յինէն դարձուցի· ի սուրբ սիրոյդ օտարացայ· զիտաս աշխարհիս սիրեցի· զծաղը և զանեղկատակութիւն սիրեցի և բարի համարեցայ: Ի տես գեղոյ պակշռեցայ· փափուկ կերակրով պարարեցայ· ծաղկահամ գինւով զմայլեցայ· մարմնով ի նեռիս խոցոտեցայ· ի ծով մեղաց ընկղմեցայ:

Արդ՝ ա՛ի բարկանալ, Ա՛ստուած, այլ՝ ներեա՛· զկրնչասակ քո հաշտեցո՛ ընդ իս· այժմ՛ւս օգնեա՛· յոտպայեչն փրկեա՛· զտուրբ Հո՛գիդ քո յի՛ս առաքեա՛: Օ՛ի թէպէտ բազմամեղ և անարժան եմ, քո ստեղծուած եմ: Խնայեա՛ յիս Տէր, զի քո ստեղծ գի՛ն եմ: Կ՛իտեմ Տէր՝ զի պղծեալ ես· տալիր ես առնել պղծութիւն առաւել այնոցիկ՝ որք հաւատով խնդրեն ի քէն: Ա՛յս պղծութիւն և ինձ բազմեաղիս: Ո՛ր լուար, Ա՛ստուած, պաղատանաց Ննեայի, լա՛ր և անարժան ծառայիս: Ննեայի հնարհեցեր պատուհանաց վերատել մարդարէին: Ո՛ր զՅովսէփ տպրեցուցեր ի չար վաճառողացն, ի լերինն յանկրաւ սրկնոջէն Եգիպտա-

ցոյց· փրկիան զնա Տէր ՚ի չար վաճառողաց և ՚ի խուժադուժ ազգէ սիրոյդ ՚ի վերայ իմ։ Ու պՎերկեսացին փրկեցեր ՚ի լեզեան դիւէն, փրկիան զնա, Տէր Աստուած, ՚ի խաբող բանսարկուէն, որ չարիմաց հնարիւք կամի զնա կորուսանել, զհոգի՝ գիհաս և զմարմին իմ։ Ու զԱրիամ Ասպգալենացի փրկեցեր ՚ի չար դիւէն՝ յօմԹանցն, փրկիան զնա Տէր յօմԹն մնհու չափ մեզացն, զինչ մարմնոյս եմ ես գործեալ։ Ո՞ր զՀուշան փրկեցեր ՚ի գառն ծերացն, և գառապարտեցեր զղջպարտիչն, փրկիան զնա ՚ի չար հաղբից սատանայի սիրոյդ ՚ի վերայ իմ։ Ո՞ր զՅունան ապաքեցուցեր ՚ի խորս ծովուն զերիս սիւս և զերիս գիշերս, փրկիան զնա, Տէր Աստուած, ՚ի ծովացեալ մեղաց իմոց՝ զինչ գործեալ եմ։ Ո՞ր զերիս մանկտնան փրկեցեր ՚ի հրոյն Նաբկոնի, փրկիան զնա ՚ի հրոյն յաւիտենից, ապատնա զիս՝ հոգիս յանեներելի տանջանացն։ Ո՞ր զԱնիել փրկեցեր ՚ի բերանոյ առիւծոյն, փրկիան զնա ՚ի բերանոյն սատանայի, որ բացեալ է զերկաւն մնհարեր, և կամի կլանել զնա։ Ո՞ր զերշ գորշեցեալ ՚ի պատնիկ կանանց, մի գայշեր ՚ի մեզուցեալ յանապժան քո ստեղծուածոյս։ Ո՞ր ընկալար զաղԹս արդարոյն ՚ի գառս և ՚ի ժամնակս, գԱբելին, գՆովքայն, և կատարեցեր զինդրուածս նոցա, կատարեա ՚ի բարի զինդրուածս իմ։ Փչեա ՚ի յոգածին սիրոյ քո յիսկեզ անձն իմ։ ցրուեա զչարիս իմ, և լից գպակասութիւնս։ Ու քեզ Տէր ապաղաչեցի, մի սատմոսԹեամբ յանդիմաներ զնա։

Օրհնեալ Հայր և Որդի և սուրբ Հոգի, Աստուած ճշմարիտ։ Օրհնեալ մայր Աստուծոյ Աստիամ՝ սանեօրհնեալ սուրբ Աստուածածնին։ Օրհնեալ կենդանատար սուրբ նշան՝ Աստուածընկալ խաչդ Քրիստոսի։ Օրհնեալ սուրբ և փառաւորեալ կաԹուղիկէ Ս. աքեպեական սուրբ եկեղեցի, որ ընդ ամենայն սրեգեբրս։ Օրհնեալ ամենայն սուրբք Աստուծոյ՝ երիսատղք և երկրատղք, և որոյ այսօր է յիշատակ։ Օրհնեալ սուրբ կաթուղիս և մկրտիչ Քրիստոսի՝ սուրբ Յովհաննէս։ Օրհնեալ անպրանիկ որդեգիր Քրիստոսի՝ սուրբ Սահմանոս։ Օրհնեալ ԱստուածագուԹ ծնօղդ մեր՝ սուրբ Գրիգոր։ Օրհնեալ սուրբ Արիստակէս։ Օրհնեալ սուրբ Վ.ԹԹանէս։ Օրհնեալ սուրբ Յուսիկ։ Օրհնեալ սուրբ Գրիգորիս։ Օրհնեալ սուրբ Ներսէս։

ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՐԱՑ ԱՒՏՆԻՆ ՈՒՍՈՒՑՉԱՑ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿԱՑ*

Ինչո՞ւ մեզ է իյանում առանին ուսուցչաց պարտականութիւնը, յարաբերութեամբ դէպ ի մանկանց ազգային արուեստից կրթութիւնը.

(Շարունակութիւն և վերջ Գ. էլխայ*):

Կրճատեան զգացումը ծնանվում է մեր մէջ, երբ յանդիման ենք կացուցանում մեզ Աստուած և մեր դէպ ի նա յարաբերութիւնքն: Նա մեծ ազգեցութիւն ունի մարդոյ բարոյականութեան վերայ և նորա թէ ժամանակաւոր և թէ յաւիտենական վիճակի: Ա՛նուկը այդ հանդիսում ևս պահանջում է իւր համար դասատիարակի բարեմիտ օժանդակութիւնը, և նաև առաւել, քան թէ մի այլ բանի մէջ: Անշուշտ նորա հոգւոյ բնութեան մէջ ի խորս քանդակուած է ամենաբարձր և կատարելագոյն էութեան զաղափարը, սակայն այդ նախանկարը՝ յերևան է գալիս նորա մէջ, կանոնաւոր, ակամայ պահանջմամբ, առանց ամենևին ճիշդ և որոշ յանդիմանութեան: Ածեցէք մանկան քարի մօտ և ասացէք, թէ այդ Աստուած է, — և նա երկիւղագութիւն կ'տայ քարին, իբրև Աստուծոյ, ցոյց տուեցէք ծառը, — նա երկիւղագութիւն կ'տայ նորան, պիտանեալ բանականի անդրի կանգնացրէք և դոչեցէք նորան Աստուած, — մանուկը նորա առաջ ևս չերմեռանդութիւն կ'զգայ և երկիւղագութիւն կանի, ամէնուրեք և ամենեցուն առաջ ծունր կիջանի և բարեպաշտութիւն ցոյց կտայ, քանի որում չէ կարող այդ չառնել, ամենաբարձր էութեան անյաղթելի ընդաբոյս պահանջմամբ յաւիշտակուած լինելով, իսկ ուր է և որպիսի է նա, — մանուկը չգիտէ: Ա՛հա ասիկ հիմն անաստուածութեան (որ ճիշտ մտօք չկայ), բազմաստուածութեան և այլ կրօնական մոլորութեանց: Այս տեղից է բայվում մանկանց մէջ կրօնական զգացումն ուղղապէս զարգացուցանելոյ հանդիպն վսեմութիւնը և գերազանցութիւնը: Դաստիարակել մարդուն, իբրև մարդ, կարող է և Դաղղիացին, և Գերմանացին, և Անգլիացին, սակայն իբրև քրիստոնեայ, ուղղափառութեան հոգւով,

---

* Ցե՛ս ի՛ Դ. ի՛ ՃԳ. ի՛ ՃՋ. և ի՛ ՃԸ. աեսր. ՀՌաքաղիա:

կալող է միայն ուղղափառ քրիստոնեայն: Ասա՝ շատ խոհեմութեամբ են վարվում այն ծնող քը, որք դաստիարակութեան այդ գերազնիւ մասը՝ յանձնում են ամենայն բարեհոգութեամբ մի առանձին մարդոյ — օրհնուածոյ վարժապետին: Իսկ եթէ ինքնին առանին ուսուցիչը ուղղափառ քրիստոնեայ է, ուստի նորա պարտքըն այն պիտոյ է լինի այդ հանդիսում, որ ցոյց տայ Աստուծոյ իմաստութեան և բարութեան շաւիղները՝ աշխարհի և մարդոյ անվրէպ կարգաւորութեան մէջ, և այսօրինակ՝ անդադար զարթուցանէ իւր աշակերտի մէջ կրօնական զգացումն:

Սակայն զարթուցանել աշակերտի մէջ այս կամ այն ազնիւ զգացողութիւնք, տակաւին չէ նշանակում առնել նորանից գեղարուեստապէս կրթեալ մարդ: Ո՞նչպէս ցաւալի է նայել այն մանկանց վերայ, երբ նոքա ներգործուելով մի միայն ճշմարտութեան զգացման ազդեցութեան տակ, ամէնուրեք և ամէն բանի մէջ, արտայայտում են անտանելի նրբաբանութիւն և աւելորդ ուսումնասիրութիւն: Ո՞նչ լաւութիւն կարելի է ապասել այն մանուկներից ոլք արհամարհանօք են նայում ամէն մարդկանց վերայ, իբրև բարոյական հրեշների, պանծալով իւրեանց առաքինութեամբք, և այդ լինում է այն ժամանակ, երբ բարոյական զգացումն գերազանցութիւն է ստանում: Կարող է արդեօք գեղեցկութեան զգացումն նեցուկ լինել բարոյապէս գերագունին, երբ նա շղթայուած է ըզգայարար գեղեցկի հետ, արդեօք համակրութիւնը կ'բաղկացուցանէ՞ հանճարեղ, ընդհանրական սիրոյ և փոխադարձ բարեկամութեան հիմը, եթէ նա բոլորովին զգայնութիւն փոխարկուի: Վերջապէս մեղկրթութիւնը, կեղծաւոր բարեպաշտութիւնը չէ՞ն արդեօք անխոհեմութեամբ բռնաւորեալ կրօնական զգացման չարաչար հետեւանքը: Այդ ամէնը ցուցանում է ուղիղ առաջնորդութեան կարի և անշուշտ հարկաւորութիւնը, յարաբերութեամբ հոգւոյ զգացողութիւններին: Որովհետև այդ ամէն թերութիւնքըն ծագում են կամ աւելորդ դիւրազգացողութենից, կամ երբ մի զգացողութիւն իշխում է միւսի վերայ, ուստի այս տեղից բացվում է դաստիարակի համար պարտականութեան մի նոր ասպարէզ, մէկ կողմանէ, պատսպարել իւր աշակերտաց՝ զգացմանց աւելորդ ուժգնութենից, իսկ միւս կողմանէ, մի գուցէ թէ, մի քանի զգացողութիւնք բթութիւն ստանան ուրիշներից: Այդ թերութեանց վերայ՝ այնու առաւել պիտոյ է ուշադրութիւն դար-

*ձուցանել, քանի նոքա բազմանում՝ են և տպաւորում մեր ժա-
մանակուան մանկանց մէջ։*

*Ինչի՞ն է ծառում աւելորդ դիւրապզայութիւնը, կամ մի քանի
զգայողութեանց նրբութիւնը մանկանց մէջ։ Դիւրապզացու-
նը կամ խանդաղատութիւնը ոտ հասարակ բնական է տղայական
հասակին և տարիքի հետ անցանում է ինքնին։ Նայց սակայն,
երբ ջանադիր չեն լինում իւր ժամանակին չափաւորել այդ ման-
կական բոցը, այլ ևս քան զևս պրպտում են, անդադար ձարակ
տալով նորան, ուստի՝ այդ բոցը՝ յեղափոխվում է դէպ ի դարո-
վիլը և ծանակելի զգայնութիւն — ու է մեր դարու յոլով մարդ-
կանց բնաւորութիւնը։ Դիւրապզացութեան համար՝ նիւթ և
ձարակ են լինում, մանաւանդ անդադար դիւրապրպտութիւնը, յի-
մար և անմիտ վիպասանութեանց յաճախ ընթերցանութիւնը, որք
սաստիկ բորբոքում են մանկական երեւակայութիւնը, ընկերա-
կցութիւնը կարի յոյժ վնասվում մարդկանց հետ, իսկ գլխաւորը —
դուք ի՞նչ էք կարծում — մարդկան դասակարգի մէջ տարա-
ծուած մի կարի յոյժ քնքուշ վարմունք։ Նարեմիա և զգօն դաս-
տիարակը, որքան էլ ևս չգժուարանալ մերժել և անդոնել սուտ
դիւրագրգռութեան առաջին պատճառքը, բայց վերջինը մերժելոյ
համար, — Ծոզ յառաջագոյն խորհուրդ հարցանէ ծնողաց, ար-
դեօք կ'հրամայե՞ն նոքա, և այդ չի՞ կոչել mauvais ton, — բայց
մեք դառնամք դէպ ի մեւս հարցմունքը։

*Ինչի՞ն են բթանում զգայողութիւնքն մանկանց մէջ, մեք
ցոյց կուտանք յատկապէս այն պատճառները՝ որք կախվում են իսկ
և իսկ ուսուցիչներից։*

1· Ծոգնաթութիւնը ասում է մեզ, թէ զգայողութիւնքն
դառնում են իւրեանց համար կերակուր պերազութեանց մէջ, և
ոչ թէ չոր ու ցամաք, վերացական հայեցողութեանց։ Ուստի՝ և-
թէ առաջին ուսուցիչքը չանադիր են լինում պարապեցուցանել
մանկանց՝ միայն և եթէ մեռաւորական առարկայիք, չորուցամաք
ուսուցանում են զանազան լեզուք, և զեզկուում են մեքենական
կենազորկ զբաղմունքներով, ուստի նոքա ոչ թէ միայն թուլացու-
ցանում են և բթացուցանում ազնիւ զգայողութիւնքն, այլև
մինչև անգամ կարող են խափան անհետ առնել նոցա։ Այս է ա-
հաւասիկ պատճառը, որ ուսողութիւնքը մեծաւ մասամբ, զգայա-
զերկ են լինում, և բազմից բնութեան և ճարտարութեան գեղե-

ցիկ պատապրումեանց վերայ նայում են միայն ուսողումեան չափու կողմից։

2. *Օգացման բնութիւնը ծագվում է այն ժամանակ, երբ դաստիարակքը չանք չեն դնում խափանարկու լինել այն առաջադրութեանց, որք հակառակ են այդ ընդունակութեան։ Օրինակ, մանկունք կորուսանում են ամենայն բարոյական զգացումն մեծապանայ դէպ ի մարդկութիւնը, եթէ միշտ և հանապազ ունենան աչաց առաջև մարդկանց անբարոյական վարմունքը, ոխ, ապիրատութիւն, դաւանակալութիւն, վրէժխնդրութիւն, ագբեցութիւն և այլն — նաև այնպիսի նկարագրութիւնք, որք պիտոյ է զայրացուցանեն և պատապարեն զգացողութիւնքն, կարող են նեղդործել մանկան բոլորովին ընդ հակառակը, եթէ յաճախ և անընդհատ կրկնուին։ Արդուն բնական է համազգաց լինել իւր նմանեաց չարչարանքներին, սակայն չքմեղ տեսանում՝ արդեօք, որ վերաբուժայ մէջ բնանում է համակրական զգացումը դէպ ի մարդկութիւնը այնու աղագաւ միայն, որ նոքա անդադար տեսանում են իւրեանց առաջև մարդկանց չարչարանքը, տանջանքը և թշուառութիւնքը։*

3. *Անկանց զգացողութիւնքը կարի յաճախ ձնշվում են, երբ այլք ծաղր են առնում նոցա խանդաղատութեան վերայ, յանդիման են կացուցանում նորան պարտաւելի եղանակաւ կամ նաև համարում են նորան անմտութիւն։ Յիրաւի, լաց լինել թեթեւնիկի վերայ, կամ ոտնակոխ արած ծաղկի՝ արդարև ծիծաղելի է և այպանելի։ Այլ եթէ լաց է լինում մանուկը, երբ տեսանում է, որ մորթել են իւր գառնուկը, որի հետ նա խաղում էր, կամ հաւը, զոր նա ինքնին իւր ձեռօք կերակրում էր, մի՛ ծիծաղեցէք նորա վերայ և մի՛ կոչեցէք նորան չիմար երեխայ, այնու պատճառաւ, որ մարդկային ազնուագոյն զգացումն՝ զեղանում է նորա մէջ ապտաստօք։*

4. *Ակնյայտ է մի քանի զգացմանց բնութիւնը լինում է և այն ժամանակ, երբ մի զգացողութիւն զարգանում է միւսի տեղ, և այսօրինակ իշխում է մանկական հոգւոյ մէջ, նկուն առնելով բոլոր միւսներին։ Ո՞նչպէս բաղձալի և ախորժելի է տեսանել մարդուն, երբ նա ընդունում է ջերմեռանդն և բոլորասիրտ մանուկ գութիւն իւր մերձաւորաց բարերախտութեան և ապաքախտութեան մէջ։ Սակայն այդ բարութիւնը՝ արտաքս կանուխ*

լով բանականութեան սահմաններէից, ոչ ապաքէն լինուր է ոխե-
րիմ թշնամի իւր իսկ և այլոց համար: Ինքն ըստ ինքեան իմաց-
վուր է, թէ երբ ուղղապէս և խոհեմութեամբ զարգացուցանեմք
ամէն մի զգացումը առանձնաբար, այդ ամէն թերութիւնքը իս-
պառ անհետ կլինին:

(Շարունակելոյ)

Սահակ Պապովեանց:

ԱՒ ԼԵԱՒՆ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՍ

Ի ԴԻՄԱՑ ՍԻՑԻԱՓԻ

Վհո ալեզարդ գագաթըդ փայլի իրիւ ադամանդ.
Մարդըն բանական պըտուղ, ծառ նորա է քոյդ արգանդ.
Տանուտէրդ ի Նախ'ջևան լայ, Տիրուհիդ ի Մարանդ.
Ի ժամ մահու քեզ Թողին ըղքաջ Հայկազունս՝ աւանդ:
Ա՛ր Հիշեցի անուն քո,
Ուղիղ Հայոց սիրտն է անդ:

Ինչ Հայ ըղքեզ չէ տեսած՝ իմն կիսակենդան է.
Նորա կենսական ոյժըն մի միայն Հայաստան է:
Որ Հայոց միտքըն այս չէ՝ չար քան զօտարական է.
Հայաստանի Հարազատ որդին միշտ պարտական է
Մ՚ընալ ցըմահ՝ նահինական
Պատուիրանին հնազանդ:

Ո՞ւստ հըզօր արքայս ծընար, վերջը անտէր մընացեր.
Զանազան ըզրկանք կրելով՝ տիւ և գիշեր ողբացեր.
Ազգիդ որ գործովը դու արդեօք մէկ Հետ խընդացեր,
Թէ և մինչ ցարդ օտարաց բեռան տակին տոկացեր:
Մ՚իայն Հայաստան չեմուտ
Ո՞յսաեռ ծէս՝ ժանտ ալանդ:

Մ՚Ինձ՝ Մայր, Աւետ՝ Աւրի. սէր՝ Սըրբակաց, Դէպ՝ իսկ.
Հայկայ որդւոց սըրբասէր Մայրը դու ես իսկ և իսկ.
Ընտրեալ լեառըն դու ես, Թող լինին Հազար Մասիսք:
Թէև ի բազմաց միջև գոն զանազան աստուիսք,
Փայլի չէ, զի հերձուածողաց
Չ՚ըրոյցըն միշտ ոխ է Հանդ:

Որովհետև դու սուրբ ես՝ միշտ ընդդէմ է քեզ Յոխն.
Եթէ պապը մեղք գործէ՝ անշուշտ կրպատժէս Թոռին.

Որո՞յ սիրտըն խընայէ վատթար երախտամոռին.
Մէկ հընչմամբ տապալեցեր զինքնահաւան Ակռին,
Օ՜ձայն՝ որ նահապետըն նոյ
Նգեալ էր քո մօտ պոռոնդ։

Ընտիր որդիքըդ կորեան, մընացին ըստորներըն,
Որք փոխան ազգի սիրոյն՝ ընտրեցին փողոյ սէրըն։
Նախնեաց բարեգործութեան մընացեալ է ըստուերըն.
Ցայս մասին հենգնեն ըզմեզ այլազաւան ազգերըն.
Սակայն մեք չեմք կարմրըռում,
Օ՜ի չ'կայ մեր մէջ խոնդ։

Ո՜հ, ո՞ւր է մեր այն գարըն՝ յորում մեծըն Հայաստան
Ծընանէր դիւցազուններ՝ որպէս Արտաշէս, Տիգրան,
Որք ըզՀայկեան ազգի փառքն մինչև յերկինս հասցըրան։
Փոքր ժամանակի մէջ քանի՜ յայտնի գիտնական
Ընծայեցին Հայրենեաց
Հշական, խորնի, վանոնդ։

Արթնա՛, ընդէ՞ր չես արդեօք հրաւիրում որոտալով—
Զազգըդ՝ քո թևոց տակըն ժողովում խըրատ տալով.
Մի՛թէ սիրտըդ չէ՞ ցաւում տըրտմութեան մէջ մնալով.
Աշխարհումը դու էիր պատուելի արժանագով։
Ո՞ւր է Աշոտ Շահանշահ,
Տըրդատ, խոսրով, գոռ երոանդ։

Էյեա՛դ, ո՛հ, արտասուքըդ ո՛չ ումէք խիղճ չըտըւաւ.
Վատն ազգի արած սուգըդ ականջ նորա չըլըսաւ։
Նա նախնեաց իրաւունքը կը փոխէ մէկ լակ ձուաւ.
Դու ըզմեռեալն ո՞նց կարես զարթուցանել լոկ լեզուաւ։
Ձէ՛ տընաշէն այնպիսին,
Ա՛յլ՝ գըլխովին գընոփանդ։

Սեբեոս։

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ ՀԱՑԿԱԿԱՆ ԲԱՌԻՑ

ԱՐՄԵՆԱԿ։

Ընդրանիկն Հայկայ ծընունդ՝ Արմենակ,
Ընթերցուածին անպչդ պար էր գոյնակ։

ԲԱՂԵՇ։

Օտ 'ի քաղաքն 'ի Բաղէշ
Պոպոխ, ասեն, գըտաւ Եզ։

Մ· Մ·

ՏԱՐԵԳԻՐ

ՊՕՂՈՍ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ «ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ» ՎԵՐՆԱԳՐՈՎ ՅՕԴՈՒԱԾԻ ԴԷՄ

Որ տպուած է «Հէնտէֆայլ» օրագրի մէջ, 1860 ամի, Դեկտեմբերի ամսոյ երես 484—514։

(Շարունակութիւն և վերջ)։

Ընդանդիմին Պօղոս, զոր գրում ես, թէ պ. Արարատեանը «Ցառաջ թշնամի էր աշխարհարարին և կամենում էր պաշտպանել գրաբառ լեզուն ղ խափանել լուսաւոր գաղափարների միտքը Հայ հասարակութեան մէջ կենդանի աշխարհարար բարբառով, և յետոյ Նազարեանցին օրինակ վեր առնելով ինքն իրան հակառակ ձախու ձեռնոցն գրելով աջու ձեռնոցը ընդե-լով՝ սկսեց աշխարհարար գրել և աշխարհարար թարգմանել»։ Ասում ես այս խօսքերս և ակն յայտնի չես ապացուցանում՝ թէ Արարատեանը երբ և ի՞նչ տեղ թշնամութիւն արաւ աշխարհարար գրելոյն, և ո՞ր եղանա-կաւ խափանարար գտնուեցաւ նորա լուսաւոր գաղափարացն մուտ գոր-ծելոյ ի մէջ հասարակութեան Հայոց։ Ո՛չ Արարատեանը, ո՛չ ես, և ո՛չ մեր բոլոր Հայերը գիտենք, թէ երբէք էլել է մի դատարկ կատափի մէջ խօսքերս լուսաւորութեան։ Ակն մնարդը՝ որ ինքն ճշմարիտ լուսաւորութեան կարօտ է, ուրիշին ի՞նչ լուսաւորութիւն կարող է տալ։ Ուսուցտանիցը ամեն տարի կարաւանով թղթեր շատ են գալի մեր քաղաքը. այն թղթերի հաշուումն է և քո կարծեցած լուսաւորութեան խօսքերէդ գրած տետրակ-ներն. և իւրեանց արժանաւոր պատիւը ստանում են անպակաս իրանց տեղերում, ով որ միանգամ կամայ կամ՝ ակամայ պատահում է նրանց։ Պ. Արարատեանը յիրաւի գրաբառ լեզուն՝ իրրև անդրանիկ ազգային պարծանք և ամենահին պատուական անտիքիւտ ժառանգութիւն հասած առ մեզ ի մեր վերնրանեալ հարանց՝ պաշտպանում է և կը պաշտպանէ մինչ ի իւր մահը յանիրաւ և յանխիղճ անարգողաց գնա։ Եւ գնա սի-րով և յանարգանօք ի գործ ածելոյ՝ ոչ երբէք հոգացած և ձեռընթափ է էլած, և ոչ երբէք կը լինի. սուտ ուրախութիւն է այդ, զոր գու զգում ես քո մէջ. բայց այսու ամենայնիւ՝ թշնամի և խափանարար չէ էլած աշ-խարհիկ խօսակցութեան, ոչ բանիւ և ոչ գործով։ Ընդ հակառակն նա ասում է. «Ամենայն յանկացող աշխատիլ և գրել վասն հասարակաց՝ ա-զատ է գրել որ աշխարհարարիւ և կամի՝ առանց ձեռնամուխ լինելոյ ի նախկին մայր լեզուն՝ գրաբար, անփոփոխ և աննորոգելի հնութիւնբ բնդոգրել գնա անուանելով» (Դիմագրաւ· էջ 13 տող 4)։ Ասմէ յայտնապէս երևում է, թէ պ. Արարատեանը հակառակ չէ՝ աշխարհարար գրելոյն, այլ նորա

ցաւիլն և հոգալն այն է, որ Գրոց լեզուի յարգն ու արժանաւորութիւնը ճանաչուի, և իբրև մի սրբազան աւանդ մնայ մեր մէջ։ Բայց թէ նազարեանցի նորահնար, ինքնակարկատ հայախօսութիւնը ընդդէմ է և միշտ անհատան, պղծ յիրաւի է· և այն՝ ոչ թէ միայն պ· Արարատեանն, այլ համարեա թէ ամենայն Հայ· որովհետև ամենեքեան բարձրաբարբառ և մեծաձայն աղաղակեն անթիւ փաստիք և ապացուցմունքով, թէ պ· Նազարեանցի նոր հայախօսութիւնը՝ մեր լեզուի ապականութիւն է, խանգարումն է, և ոչինչ իւիք է օգտարեր և պիտանացու· նա՛ի սպառ հասարակաց կենդանի լարբառով չէ խօսում։ Նորա լեզուի ոճը աւելի խոնոպէոն էոքոս կարելի է անուանել քան թէ հելլէնաց ալեքսոքոս· նա միայն վերջվերջը է փոխում, երկար և անախորժ ըստ քմաց՝ բարդած և ածանցած անուանքներ է շինում։ օտարազգի անհասկանալի բառեր է գործ գնում, լեզուի քաղցրութեան և կանոնացը երբէք ուշադիր չէ լինում։ որոց մի առ մի պլանդակութիւնն ցանկացողն կարէ տեսանել վերոյիշեալ Դիմագրաւի մէջ։

Պօղոս, դու քո մօր փորումն դեռ ջնած կը լինէիր, երբ պ· Արարատեանն ոչ միայն գրաբառ և աշխարհաբառ լեզուով դասատուութիւն էր անում, այլ և մեր նոր կտակարանը՝ ըստ խնդրոյ գերմանացի Դիտրիխայ Աւգուստայ պատուոյ՝ փոխեց յաշխարհաբառ լեզու, որ նախ՛ի Զմիւռնիա տպուեց և ապա՛ի Մոսկուայ։ Դրանից յետոյ Սաղմոսը շրջից յաշխարհաբառ, որ տպած է՛ի Զմիւռնիա։ Եւ ապա դարձեալ նոյն յիշեալ պատուոյ խնդրանօք «Յովհաննու Աւրընտայ 3 հատոր գրեանքն յաղագս ճշմարիտ քրիստոնէա թեան» (յորոց ամէն մէկի մեծութիւնը մեր շարականի չափ էր) թարգմանեց՛ի Ռուսաց լեզու է՛ի մերս աշխարհաբառ. և ընկալաւ՛ի յիշեալ քահանայէն մեծագումար վարձ, և բանիւ ու գրով շնորհակալութիւն, այն աշխատանքների մասին։

Դու կարծում ես Պօղոս, թէ քո նազարեանցն է սկիզբն արել մեր ազգի մէջ աշխարհաբառ գրելու. և նրան միայն կը պատկանի այնպիսի գիւտի համար ստանալ գովութիւն և պատիւ՛ի Հայոց հասարակութենէն։ Ո՛չ, ոչ. սխալվում ես. երևի թէ՝ պատմութիւն չես կարդացել, և Հայերեն գրեանք չես տեսել, և բոլորովին բանից բէհրաբար խօսում ես. չիմանալով թէ աշխարհաբառ լեզուի գործածութիւնը մեր մէջ երևում է ըստ կըստած ժա, ժը և ժգ դարերիցը։ Կարդա՛ Մատթէոս պատմագրի, Մխիթարայ լժշկի, Գրիգորի Անաւարզեցւոյ և Օրբելեան Ստեփանոսի գրուածքըն, ներսէս Շնորհալւոյ Հանելուկներն, ներսէս Լամբրոնացւոյ առ Լիւոն Թագաւորն մեր գրած թուղթն, և կը տեսնես թէ քո պատուիրի նազարեանցն չէ՛ պղծ բանի հեղինակն։ Ինչ տեղ էր պղծ պարոնը, երբ վերապատուելի Մխիթարեան միաբանքն հրատարակեցին գլրագիրն աշխարհօրէն, որ կոչեր «Դիտակ Բիւզանդեան», և ոչ փոքր ժամանակ շարունակեցաւ։ Ո՞ւր էր դա էն ժամանակը, երբ Մխիթար Աբրայն և նորա աշակերտքն՛ի լոյս ընծայեցին բառարաններ՛ի գրաբառէ յաշխարհաբառն, և յաշխարհաբառէ՛ի գրաբառն։ Դոցին հետ անընդհատ շարունակեցին աշ-

խարհարաւ ոչ սակաւ գրքեր, յորոց շատերից յիշեմ այս տեղ մի քանիսի անուանքն, որք են Դեղ կենաց, Քերականութիւն, Աղբար Թովմաս, Աղօթագիրք, Ոսպէնսոն, Վարժութիւն մանկանց, Հմտութիւն մանկանց 3 հատոր, Եղվարդս, Աշխարհագրութիւն, Թուաբանութիւն, Ապացոյցք կրօնի, Առողջութեան կանոններ, Արուեստաբանութիւն, Բարի խորհուրդներ, Խնամտութիւն մարդկային, Ազգասէր, Գինովաւիէ, Ջ՛ինչ է եկեղեցի, Պատրաստութիւն մահու, Երգեր, Համառօտ հնախօսութիւն, Պատմութիւն Հայաստանեայց, և այլն, և այլն: Որոց թէ աւելի կամենաս տեղեկանալ՝ կարդայ ի վենետիկ տպած ամէն տարուայ Օրացուցերի վերջումն գրած հայերէն գրքերի ցանկը: Ասածներիս թուղ վկայ լինին նաև յառաջ և մեր օրերումը ի Պոլիս, ի Զմիւռնիա, ի վենետիկ, ի վիեննա, ի կալկաթա և այլ և այլ տեղեր տպուած և հրատարակուած օրագիրներ, լրագիրներ, և զանազան առարկայից վերայ գրուած գրեանք: Ապա մի փոքր լեզուդ և գրիչդ կարճացրու, և այդպէս տարապայման մի պարծենար, թէ Հայոց ազգին նա մի մեծ ծառայութիւն կամ լաւութիւն է արել՝ իւր ն տող կիսատ պռատ աղճատասիսս և լեզուակործան գրքերովն. կամ չխոխոջայ՝ խռովութեաց դռներ բաց անող օրէրոչ:

Լոր Սօղոս, որ թէպէտ պօղոս ես փոխարկուել անուամբ, բայց նախկին Սողոսական հալածասէր բնութիւնդ անկորուստ ես պահել քո մէջ գործքով. և ճշմարտասիրացն ջանք ես անում հալածել: Արարատեանն քո համար չէ գրում, որ դու ի նմանէ խելք սովորիս կամ ոչ. «Մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզից». այլ նոցա՝ որք սուրբ և կարօտ են նոքա գրածի պէս բաներին:

Պօղոս՝ դու Մեղու լրագիրն՝ կոչում ես անթէր, ես ևս «Հիւսիսափայլ օրագիրը» կարող եմ կոչել անբիծ և խաւարամած, բայց Աստուած մի արասցէ, որ այդպիսի անբաղաբաւարի տպող բառ իմ բերանիցս դուրս գայ: «Ակն ընդ ական, և ատամն ընդ ատամն», օրէնքի կատարողն քրիստոս եմ տեսնում. որ քո բոլոր այս գրուածքի մէջ ճշմարտութիւնից փախած և սուտութիւն ու պատրողութիւն քեզ ուղեկից և առաջնորդ շինած՝ ջանք ես անում մեր բաղաքի անունը կոտրել և քո ալէկոծեալ հակառակասիրութեան հոգին մեր մէջ տիրել, որպէս թէ մեր բարերար բաղմիշխատ վարդապետին չէմք սիրում և պատուում: և նորա ամենագովելի ազգասիրութիւնն չէ՛ մեզ յայտնի: Պարոն, նա այնքան է մեզ սիրելի և մեծարելի, որքան դու՝ ատելի և դարմելի՝ քո այս որոմնացան և շիտեթարկու յօդուածովդ:

Պարոն Արարատեանն ասելով թէ Նաղարեանցն «զամն վեց աշակերտեալ է ինձ ի հայկական դպրութեան» (Դիմաղրաւ. էջ 9), դովաս հրապարակաւ չէ վկայում, թէ նա անսխալ և անթերի գիտէ Հայոց լեզուն, զոր դու ծանծռելով մեկնում ես, թէ Արարատեանը յառաջ վկայում է, թէ Նաղարեանցը Հայերէն լաւ գիտէ, և յետոյ թէ ուղիղ չէ խմանում գրել: Պարոն, այս տեղ լօգիկային քեզանից է տանջվում, և ոչ պ· Արարատեանից, որ Եղվարդսի պրաստի նման՝ առիւծի մորթի ես վրէդ քցել, սուտ թիֆլիզեցի ես դառել, և քո յատուկ անունը և տոհմանունը փոխելով

ինչ սիրտդ թելադրում է, նոյնը առանց յետ ու առաջ ակնարկելոյ մըխտում ես. բայց ես ոմի հետ եմ խօսում, որ ամէն և երկիւղ ասածը վանդ ես կորցրել քո սրտիցը և երեսիցդ. և իմ ասածը քո ականջը չի՛ մըտնիլ, ըստ որում կըրծոտ մարդը՝ է փոշոտած հայելի, պղտոր ջուր և ամպած երկինք, յորոց մէջ պատկեր և արև չէն երևիլ, ինչպէս և քո մէջ ուղղահաւատութիւն և ճշմարտախօսութիւն։ Օրինակ՝ դու պ. Արարատեանի գըրուածքի համար ասում ես պղչոփ, էրէխոփ, և ինչ նորա բերածէը Մեծոփ մէջ էնէլ ասվորելու համար չէս կարդում, այլ ինչ որ ալեհորհրդեն են լինում բերածէ։ Իսկ քեզ և պ. Նազարեանցին կոչում ես այրիան, ենթապետան, հանց, և այլն. ապա ի՞նչպէս քեզ ամէն չես համարում՝՝ քո պրաական և հակայական գիտութեամբն՝ի վէճ մտնել նորա հետ։ Առիւծի համար պատմում են, թէ երեխայից և անզօր մանր կենդանեաց զեան չէ՛ տալի պատահած ժամանակը. իսկ դու՝ որ քեզ նոյն կարգումն ես համարում, ինչպէս կըշիռ ես մտել էրէխոյ համարած մարդոյ հետ։ Բայց ո՛չ, ո՛չ, դու քո լեզուովն քեզ ստում ես, դու հաստատում ես և վկայութիւն ես տալիս, որ պ. Արարատեանը տղամարդ է, նախ՝ որ իւր անունը քո պէս չէ թագցընում. տղամարդ է երկրորդ՝ որ յօգուտ իւր ազգին և եկեղեցւոյ ամենայն զօրութեամբ և հաւատարմութեամբ աշխատում է առանց մի անձնական շահախնդրութեան. տղամարդ է երրորդ՝ որ 3 տարի՛է, որ «Պիտակրաւը»։ տպել է, և մինչև ցայժմ դու հետուից չէս կարացել նորա դէմը խօսել և գրել, և այժմ ես թիֆլիզեցւոյ ծպտեալ անուամբ դանգատում ես ո՛չ ամբողջ գրքի իմաստից վերայ, այլ 2 կամ 3 կտոր խօսքերի վերայ, և այն՝ թիւր և սխալամիտ հասկացողութեամբ և դատողութեամբ։

Ա՛յլ թէ դու, Պօղոս, ճշմարիտ առ՝ի սրտէ բարեկամ ես Նազարեանցիդ, և ցանկանում ես, որ Հայի ազգը սիրի, պատուի զրան, և դորա պաշտօնեաները աշխատասիրած գրեանքը ընդունի, և ամենայն կերպով օգտի դորա ուսումնականութեանը, խորհուրդ տուր զրան և աշխատիր, որքան կարելի է, խելքումը նստացրուս, որ դա այս՝ի ներքոյ բացայայտեալ երկաք բանից ձեռը վեր առնի, և՝ի զուր ամենի աչքիցը չընկնի, և բոլոր Հայերին իւր դէմ չսպառազինի։

Ա՛ռաջին՝ այն է, որ դա մինչև ցայժմ կրօնի, եկեղեցւոյ և մեր հին և նոր հոգևորականաց վերայ որքան գրած և տպած յօդուածները ունի, կրակի տայ, այրի. հրապարակաւ զղջայ և մեղայ գայ ազգին՝ բոլոր աշխարհի առաջևը, թէ ինքն մարմնաւորական մարդ գոլով՝ ինչ որ արել է սխալ է՝ զղջանայ, և այսուհետև գործ չունենայ հաւատի, եկեղեցւոյ և նորա պաշտօնէից հետ, և ներողութիւն խնդրի՝ի մէնք ամենից· սորանով դորա պատուին և անուանը ամէն և պակասութիւն չի լինիլ, այլ թէ աւելի իւր իսկական Հայութիւնը և քրիստոնէական պարտքը կը կատարի։ «Որ նախ խոնարհի, նախապատիւ բարձրասցի»։ Եւ թէ ցանկանում է, իւր անունը անմահացնել ազգային մեծագործութեամբ, թող Էջմիածին գնայ, աբեղայ դառնայ, և էն տեղը վարդապետաց հանախոհութեամբ, միաբանութեամբ և գործակցութեամբ իւր դիտաւորութիւնըն յառաջ տանի։

Երկրորդ՝ գրաբառ լեզուի մայրութիւնը, պատուականութիւնը և առաջնութիւնը չուրանայ. չի կամենում գրաբառ գրել, թող գրի ինչ աշխարհաբառ որ ուզում է՝ առանց հայհոյելոյ զգրաբառն: Շատ գառն, շատ գժուար, շատ անտանելի է մեզ Հայի բերնից լսել Հայրենական պանծալի լեզուի քամահանքն: Ով որ միանգամ Ատուածաշնչի հրաշալի թարգմանութիւնը, Խորենացւոյ, Եղիշէի, Ցովհաննէս Կաթողիկոսի, Ղարեկացւոյ, Շնորհալւոյ, Լամբրոնացւոյ Հոգեզարդ և համեղալուր շարադրութեանց և ամենաքաղցր Շարականաց մերոց և եկեղեցական ժամերգութեանց և գանձերի ու ազգային երգերի համը առած է, և տեղեակ է բառական այն ամենըննտիր լեզուի ոսկեհատոյ և մարգարտահիւս ոճերին, գարձուածներին և ձևերին, նա Ղազարեանցի խօսքով նրանցից չետ չի կենալ, չի զըուիլ, այնպիսի գեղեցիկ գոհարափայլ խօսքերով լիքը գրքերը՝ մի նորահնար և խառնափնդոր աշխարհիկ լեզուի հետ չի փոխիլ, որ իրրև մի Թեթևապին ապակի (ըալա) է նրանց մօտ: Մեր ազգը մեծ մասամբ Օսմանեանց և Պարսից ձեռաց տակ են, թող Անգլիայն, Ամերիայն և այլն. ոմ է կամենում դա ստիպել և հրամայել, որ իր ամենասիրելի գեղեցիկ լեզուն թողնի և դորա ծայրաստիճան բառերով պլանդակուած լեզուն ընդունի: Մի միայն Ռուսաց տէրութեան հպատակ Հայքն մօտ 10, 30 տեսակ աշխարհաբառ են բանացնում: Պաղտխի և Թօրչալուի Հայքն՝ որք քեզ շատ ծանօթ են, Պարսկաստանի Հայերի պէս չեն խօսում: և Ագուլեաց Հայերը՝ Նոր Խնծուց և Շամախեցւոց լեզուն գժուարաձև են հասկանում: այսպէս և Գանձակեցիք՝ Թիֆլիսկեցւոց լեզուն. դա որ միներն է կամենում իր բարբառը հասկանալի առնել: Ասա, ասա դրան, այդ անկարելի բան է. գլուխ չի գալ այդ գործը. մի պարծենար. այդ խորհուրդը և այդ գործը արդէն քանդուած է. ընդունոյ չկայ. և թէ մի, երկու կամ երեք անձինք գտնուին հաւանող, դորանով բան չի դառնալ. Բէր ևէՀՀ՚ Եաչ օՀԿ՚ Ուզիլ է գրել պ· Արարատեանն Դիմակրաւի մէջ (էջ 17· տող 29)· «Միշտ անպատուղ չորասցին ցանք նորա, և միշտ այսն կատականաց հոլիցի առաջի իւր և այլոց ազգաց, ձայնակցելով Շնորհալւոյն, «Զարմանայ մեր ի մի տիղ և ի մի երկիր լիներ կենդրոնացած մի Տէրութեան ձեռի տակ, յայնժամ՝ ես անկարելի էր զայդպիսի խորհուրդ յատաջ տանել՝ զգրաբառն խափանելով, և զամէն կախաղան թիւնն Ղազարեան՝ փոխանակ ընդունելով. ապա ո՞ր միաց որ մեր ազգը ամեն տիղ ցրուած և ամեն տիղ իր հանար այլ և այլ խառնափնդոր աշխարհաբառ շինած գարէ ցգար խօսում է. և դորա ատածները ոչ թէ միայն հողմոյ հնչմունք կը համարուին նրանց առաջը, այլ և ատոլին անկատար և խելացնոր կը համարին: Ասա Պօղոս, ասա Ղազարեանցին որ այդ դիտաւորութիւնը խոր թաղի՝: Ասա դրան այդ բանը, իրաւիր, խելք տուր դրան, զի դորա բարեկամն դու ես միայն. կարելի է, որ քեզ լսէ. մեք շատ եմք ասել, ու գրել բայց դա մեզ թշնամի համարելով՝ մեր խօսքին չի լսում:

Երրորդ՝ իր գրուածների միջից պարծեցողն թիւն, մեծամտութիւն,

յոխորտանք, սպառնալիք, հայհոյանք, թշնամանք և պղ յայտնի և ծածուկ խռովարիթ անարգութիւնք բացէ ՚ի բաց ջնջի ու վերջացնի. հեզութեան և խոնարհութեան հոգի ստանայ. մեղմ անձրևի կամ գարնանային շաղի պէս թաւիւ իւր գրչի խօսքերը, և մի՛ տարաւի և ջաղը անձրևաց պէս։ Քաղցր աղբերաջուր գառնայ, զոր ամենայն մարդ և անասուն կարողանում է խմել. և մի՛ աղտաղտուկ և ճահճի, յորմէ փախչին և հեռանան բանականք և անբանք ՚ի խմելոյ։ Ուսեալ է, թէ՛ղ ուսումնական հոգի և վարմունք ունենայ։ «Ծառ բարի պտուղ բարի առնէ»։ Թէ՛ղ վաղեմի առածը միտք բերէ. Թէ «Որում շատ տուաւ գիտութեան իմաստ, շատ խնդրեսցի ՚ի նմանէ առաքինութեան տեսակ»։ «Տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց»։

Եւ որքան ժամանակ այս երկը առաջարկուած խնդիրքս գա չի կատարիլ, և միշտ իւր մտադրածը կը պնդի կամապաշտութեամբ, պէնքան ազգը և եկեղեցին Հայոց ո՛չ միայն դորա գրուածները չի՛ ընդունիլ և չի՛ գործածիլ, պղ և իրանից օտար և կորուած անդամ կը համարի։ Թէ՛ղ խելամուտ լինի ասածներիս, Թէ՛ղ չամչի գալ յուղղութիւն։ Ժանիւակ Ռուսոնի ասածը, պօղոս, քո նաղարեանցին կը յարմարի. «Եթէ ի ոտ ասէ, Թէ ես երեխ չէմ եէ, Թո՛ղ լսողը, ըսո որամ այդ ասելով պիտի է նա, որ այսօր էլը է երեխ է»), և ո՛չ պ· Արարատեանին։ Սա երբեք չհմարական բան չէ արել իւր լեզուի և հաւատի դէմ, որ այդ խոստովանութիւնը չանձն առնու։ Ազատպիսի փոփոխութիւն և այսպիսի նախապատրաստութիւն առնելով իւր գործոց, մտքերի և գաղափարաց մէջ Սողոսը՝ ճշմարիտ պօղոս կը գառնայ, մեծ մեծ օգուտներ կը բերէ, անունը բարութեամբ կը հռչակուի. և բոլոր ազգի սրտի կասկածանքը և խորութիւնքը բժշկելով՝ կը լինի ամենեցուն սիրելի և հաւանելի։ Եւ այսպիսի օրինակներ մեզանում շատ են եղած, որպիսի են Սևորդեաց, Թոնդրակեցոց և այլոց նոցա նմանեալ անցքերն։ Էջմիածինը Հայոց ազգի քահանայապետութեան սուրբ Աթոռ լինելով, այն տեղ շատ բան կարելի է յառաջացնել միաբանութեամբ. հեռու նետելով բան չի՛ շինուիլ. բժիշկը հիւանդի մօտ պէտք է գնայ, հեռուից նուսխայ գրելով՝ հիւանդ չի՛ առողջանալ։ Ձրագը տան մէջ է հարկաւոր վառել՝ և ո՛չ դրանը կամ՝ կտերը։ Մոսկովում նաղարեանցի պէս գիտունք շատ կան. էդ կողմը դա հարկաւոր չէ, էս կողմերը Թո՛ղ գայ, Ազգի մէջը մնանի, Ազգը գրան տեսնի, և դա Ազգին. և յայնժամ՝ յուսալի է՝ Թէ ծաղկին և աճին գորա նորացան սերմունքն Ազգային դաստիարակութեան և լուսաւորութեան։

Ի վերջոյ զարմանամ՝ պ· Պօղոս Ղուկասեան, Թէ դու՝ որ այդքան ձեռն ու ոտն էլած՝ կողմնապահութիւն ես անում նաղարեանցի շաղակրատանքն և ծակոտծուկ մրածներն հայոյող նպատակ ըստոսոր էպղէր կոչելով, էդ քո անունը ըստ նորա հրաշալի կանոնաց՝ պօղս Լասկան չես փոխել, (տես Դիմակրաս էջ 108, տող 19). այլ ըստ նախնեաց՝ որոց գործոց անհաւան էլը դուք և նա՝ պօղս Ղասկան ես ստորագրել· սխալուիլ ես արդեօք, Թէ դիտմամբ ես զայդ արել, որ Թիֆլիզեցի Հայութեանդ վրայ ոք կասկած չունենայ։ Այլ դու՝ որ քեզ Եւրոպացի պրօֆեսսօրների կարգումն

ես դրել, և յանդգնում՝ ես ասել, որ պ· Արարատեանը և պ· Չերքէզեանցը դուս գան քո և նմանեաց միջոցը, թէպէտ նոքա ձեր գործքերը տեսնելով՝ վաղուց են «Հրաժարիմք» ասել ձեր միաբանելոյդ համար՝ Իւրմէ սաղմոն կրկնելով՝ «Ո՛չ ժողովեսցուք մեք ի ժողովս նոցա, և ոչ յիշեսցուք զանուանս նոցա ի շրթունս մեր»· այս քո կարճ յօդուածի մէջ ի՞նչպիսի հայերէն ոճ և կանոն է ասելն «Գրաւոր և բանաւոր աշխատութիւն» (էջ 482, տող 6)· Բանաւոր աշխատութիւնը որո՞ն է, թէ կարելի՛ է, ասա·

«Ա՛շխատութիւն մինչ ի սպառ յաղթահարուել է պատրիւմբ կարկատած և ճարտասանական ձևերով·· պատրիւան յեղուվ» (էջ 489, տող 13)· Մի կարճ խօսքում երկու անգամ կրկնելը պատրիւմբ և պատրիւան յեղուվ, քերականակա՞ն ձև է, թէ ճարտասանական·

«Ձեռները պէտք ծակ կոխած» (էջ 489, տող 10)· պէտքը ձիաճանճն է, պօ՞ղոս, երևում է փորձել ես և ձեռներդ պիծակի ծակ ես դրել· Այդ ևս գաղանի արուեստ է՝ քեզ միայն յայտնի·

«Պատպատան կոպրել» (անդ)· Սանսկրիտի ոճ է և ո՛չ Հայոց· Հայերէն ասեն գոբել, գոպատան առնել, կամ գոբ առնել·

«Ա՛հապուբ մեղք է» (էջ 409, տող 17)· Ահապուբ նշանակէ մնհու արժանի, պարտական, սպանելու, մեռցնելու, որ կաստւի մարդին՝ որ մեղաց գործողն է, և ոչ մեղաց· Այստ այս ահապուբ է·

Այսպիսի են և հետևեալքս· «չմար պոճոյն»· «հնանդ դատողութիւն»· «հոյակապ նպատակ»· «ֆեֆհոֆէ բառ, տալաշնախն հերոս»· և այլն, և այլն· որոց աղճատախօսութեան վերայ պէտք չէ՛ նեղանանք, պատճառ, որ ինչ մարդ իրան լուսաւոր և լուսաւորիչ է համարում՝ և այլոց՝ երեխայ, տգէտ և յիմար, նա այսպիսի սխալներին մեղիկ չի տալ· մանաւանդ այն մեղութիւնը՝ որով պաշարեալ են այս մեր՝ ֆօէ հնանդ՝ պատուհասները, չէ՛ թողնում նրանց, որ իւրեանց սխալը խոստովանին· այլ մեք՝ որ կարողանում ենք՝ որչափ և իցէ՝ չարն ու բարին ճանաչել, պատուականը անարգին որոշել, երբէք յանձն չպիտի առնուք քեզ նման մարդահաճութեամբ գովաբան լինել այդպիսի գերմանահայ և սանսկրիտահայ անհամագոյն նորահոսութեան ձևերիդ, զորս գուցէ լուսնի բնակիչքն միայն են գործ ածում՝ երբ որ նամակ են գրում մի գերիմաստ դոկտորի·

Մ՝արտիրոս Ադամեանց բահ թիֆլիսեցի·

Ի 1861· փետրվարի 15· ի Թիֆլիզ·

Въ Тип. Лаз. Инс. вос. яз. Печатать позволяется С. Петербургъ 20-го Марта 1861 г. Цензоръ В. Бекетовъ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԶԵՑ Մ· ՄՍԵՐԵԱՆՑ և Ջ· ՄՍԵՐԵԱՆՑ·